ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒԷՐՆԵՐՈՒ ՅԱՆԿ 2001 ՏԱՐԻՈՅ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԱՅ ՏԱՃԱՐԻՆ

1- Տէր և Տիկ. Շանթ և Սիլվա Գասպարեան, Ս. Յակոբեանց տաճարին կը նուիրեն մէկ թիթեղ «սոյա-պին» իւղ: (Յունուար)

2- Տէր և Տիկ. Նազարէթ Տէր Վարդանեան, Ս. Ստեփանոսի մատրան խորանին կը նուիրեն մութ կարմիր գոյնի վարագոյր մը: (Մարտ)

3- Տիրամայր Մարի Քէչիչեան, 210x160 սանթիմեթր մութ կապոյտ գոյնի, մեքենայի գործ գորգ մը կը նուիրէ: (Ապրիլ)

4- Տիկ. Սրբուհի Խաչատուրեան, Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ Հռիփսիմեանց խորանին ծածկոց մը կը նուիրէ: (Յունիս)

5- Յորդանանէն, Ամմանաբնակ Տիկ. Սոնա Ոսկեան կը նուիրէ վեց հատ (կարմիր, կապոյտ և կանաչ) ատլասի վրայ, ոսկեթել հայկական խաչերով զգեստներու յատուկ ծրարներ (պողչա):

6- Աթէնքաբնակ, Յունաստան, Տիկ. Գոհար Թադէոսեան Ս. Յակոբի կը նուիրէ 3 (երեք) հատ խունկի տապանակ, չորս քիլոկրամ անուշահոտ խունկ և զգեստներու համար զանազան զարդեր: (Յուլիս)

7- Ս. Աթոռոյս միաբաններէն՝ Գերապատիւ Տ. Պարետ Մ. Վրդ Երէցեան Ս. Յակոբի կը նուիրէ երկու ձեռք լման զգեստ, զանազան գոյնի հինգ չուրջառներ, փորուրար և բազպան, վեց պատարագի շապիկ, մէկ դենջակ, երեք փիլոններ (մէկ սև և երկու ծաղկեայ) և ձեռաց խաչի երեք սպիտակ բոնիչներ: (Օգոստոս)

8- Օրիորդ Ազնիւ Պաղտասարեան Աստուածամօր և Ս. Յարութեան տաճարներուն կը նուիրէ մութ-կարմիր ատլասով սկիհի երկու ծածկոցներ, անկիւնները ձեռագործ հրրեշտակներով:

9- Տէր և Տիկ. Ռուբէն և Սիրվարդ Ադամեան, Ս. Յակոբի կը նուիրեն երկու միջակ չափի գորգեր: (Սեպտեմբեր)

10- Տէր և Տիկ. Շանթ և Սիլվա Գասպարեան, մէկ թիթեղ սոյա-պին իւղ կը նուիրեն:

11- Տիկին Զապէլ Գալայճեան Ս. Յակոբի կը նուիրէ միջակ չափի գորգ մը, ինչպէս նաև եկեղեցւոյս Ս. Աստուածածնայ պատկերին կը նուիրէ Աստուածամօր ոսկեայ շքաղրամ մը, շղթայով:

12- Պարսկաստանէն, Թերանաբնակ Տէր և Տիկ. Քարլոս և Ռիթա Յակոբեան Ս. Գլխադրի մատրան կը նուիրեն մէկով կէս մեթր Ղոմի մետաքսեայ գորգ մը: (Հոկտեմբեր)

13- Ս. Աթոռոյս միաբաններէն՝ Հոգշ. Տ. Էմանուէլ Արդ. Աթաջանեան և իր ծնողքը, Ս. Յակոբայ տաճարին կը նուիրեն գունաւոր քարերով արծաթեայ ձեռաց խաչ մը:

digitised by A.R.A.R.@

14- Հայրենաբնակ (Էջմիածնէն), Արժ. Տէր Յարութիւն Քահանայ դարբինեան Ս. Յակոբի կը նուիրէ կարմիր թաւիշով պատրաստուած խաչվառ մը, Աստուածամօր և Յիսուս Մանուկի պատկերները գծուած յատուկ կտաւի վրայ:

15- Ս. Աթոռոյս նուիրեալ միաբան՝ Հոգշ. Տէր Բարսեղ Վրդ. Գալէնտէրեան Ս. Յարութեան տաճարին կը նուիրէ արծաթեայ սկիհ մը մաղզմայով: Բաժակին ներքնամասը և մաղզման ոսկեզօծ, իսկ դուրսէն բաժակը ունի չորս կիտուածք մետալիոններ, ներկայացնող՝ Քրիստոսի Ծնունդը, Այլակերպութիւնը, Խաչելութիւնն ու Յարութիւնը:

16- Ս. Աթոռոյս Լուսարարապետ, Գերշ. Տ. Նուրհան Արք. Մանուկեան Ս. Յակոբի տաճարին կը նուիրէ երկու ոսկեզօծ և գոհարազարդ արծաթեայ ձեռաց խաչեր, ինչպէս նաև արծաթեայ ձեռաց խաչ մը՝ ալ Աստուածամօր տաճարին: (Նոյեմբեր)

ԵՐԱՆԻ՞ ՈՐ ՈՒՆԻՑԻ ՅԻՇԱՏԱԿ Ի ՍԻՈՎՆ

Նուրհան Արք. Մանուկեան
Լուսարարապետ Ս. Աթոռոյ

digitised by A.R.A.R.@